

ԳՆՄԱՌ-ՔԱԹՈՒՊՍՅԵՒՄԵՋՆԻՑ ԶՆՏ ԱՌԱՋԸ.

Ինչպէս ամեն մի նորածիլ գրականութիւն, այնպէս էլ մեր արդի գրականութիւնը իւր սկզբից ի վեր ենթակայ է եղել և դեռ ևս երկար ժամանակ ենթակայ պիտի լինի օտար աւելի հասունացած և հարուստ գրականութեանց ազդեցութեանը: Գամառ Քաթիպան էլ, իբրև մեր գրականութեան անդրանիկ զինուորներից մէկը, անշուշտ ենթարկուած պիտի լինէր այդպիսի ազդեցութեան: Եւ յիշուի, մանաւանդ իւր գրական գործունէութեան սկզբներում, խիստ զգալի է եղել նրա վրայ օտար հեղինակների ազդեցութիւնը: Գերմանական ազդեցութիւնը, որի պտուղն է եղել ինքը, աւելի զօրեղ արտայայտութիւն է գտել նրա գրուածների մէջ, սակայն Ֆրանսիական և ռուսական գրականութիւններն էլ չէին կարող անմասն մնալ այդ ազդեցութեան մէջ և իրենց լուծման չձգել նորաբողբոջ բանաստեղծի գանձանակի մէջ: Մի բան միայն լաւ տպաւորութիւն չէ թողնում մեզ վրայ այդ բնական երևոյթի մէջ և, կարծէք, մի փոքր նսեմացնում մեր առաջ մեծ բանաստեղծի յարգը. այդ այն է, որ նա երբէք չէ լիշել, կամ սովորութիւն չէ ունեցել լիշելու այն հեղինակների անունները, որոնց կամ նմանել է, կամ փոխադրել և կամ ուղղակի թալթամանել: Ե. Մաղաթեան երիտասարդ, բայց մեզ համար վաղ կորած, քննադատը իւր մի հրատալից յօդուածի մէջ Արասխանեանի «Մուրճ»-ում ցոյց է տալիս համեմատաբար այն նախատիպարները, որոնք ծնունդ են տուել Գամառ-Քաթիպայի այս կամ այն ոտանաւորին, առանց լիշատակութեան արժանանալու բանաստեղծի կողմից: Այնուամենայնիւ շատ ոտանաւորներ են մնում, որոնց՝ հրատարակիչը նմանութիւն կամ փոխադրութիւն է կոչում առանց նրանց աղբիւրը լիշե-

լու և ով գիտէ, գուցէ վաղը կամ միւս օրը, երբ լուրջ և գիտական քննադատութիւն կունենանք, նրա շատ ինքնուրոյն համարուած ոտանաւորները իրենց նախատիպարները կունենան:

Այս բոլորը սակայն չեն կարող մի ըուպէ անգամ նուազեցնել բանաստեղծի փառքը: Եթէ ընդունենք անգամ, որ նա չունի «Մայր Արաքսի», «Վարդան Մա միկունեան» և Նոր-Նախիջևանի բարբառով գրուած մանր գեղարուեստական պատմուածքները և զաւելշտները, նրա նմանութիւնները և փոխադրութիւնները բաւական են մեզ համոզելու, որ Գամառ-Քաթիպան մեծ, տաղանդաւոր բանաստեղծ է, որովհետև զրանք սովորական նմանութիւններ ու փոխադրութիւններ չեն:

Նմանեցնողը, փոխադրողը կամ ուղղակի թարգմանում է աննշան փոփոխութիւններով, կամ փոփոխում է գրուածքի որևէ մասը, մի հանգամանքի փոխարէն դնելով մի աւելի յարմար հանգամանք կամ գործողութիւն և կամ գրուածքի իմաստը և տոնը պահելով մի այլ երևոյթի մէջ է դնում նրան մեր տուայ, ներկա յացնելով այն աւելի կամ պակաս գունաւորուած: Այս կամ այն երևոյթի ընտրութեան ու երանգի մէջ պէտք է երևայ անշուշտ փոխադրողի կարողութիւնը և դեռ աւելին՝ տաղանդը: Նա կարող է գրուածքը կամ փչացնել բոլորովին և կամ նախատիպարից շատ աւելի արժէքաւոր դարձնել: Ինչ Գամառ Քաթիպային է վերաբերում, ամենայն իրաւամբ կարող ենք ասել, որ նա վերջին տեսակի նմանողներին է պատկանում: Իւր ինքնուրոյնութիւնը պահելով հանդերձ, շատ անգամ նա նախատիպարներից շատ աւելի կատարեալ արտադրութիւն է տուել մեզ: Առանց լայն ծաւալ տալու մեր այդ մտքին, իբրև օրինակ կրերենք նորա «Մեզնից շատ առաջ» բալլադը (վերնագիրը «Երկու քոյր»), որի նախատիպարի մի վարիանտը լսելով մի ուրու պառուկից գրի առանք:

Համեմատելով բնագիրը և հայերէն նմանութիւնը (ըստ Գր. Խալաթեանի. տես «Ընտիր երկասիրութիւններ») կամ աւելի ճիշտ փոխադրութիւնը, ընթերցողը կտեսնէ, որ Գամառ-Քաթիպայի ստեղծագործող գրչի

տակ ուուսական շոր ու ցամաք ժողովրդական երգը
 դարձել է մի սքանչելի պարերգ, կատարեալ գեղարուես-
 տական թէ ըստ ձևի և թէ ըստ բովանդակութեան:
 Գրա նմանները մեր աղքատիկ գրականութեան մէջ
 մատների վրայ կարելի է համրել:

Կողք-կողքի զնելով մենք մաս-մաս բաց ամբող-
 ջապէս կրերենք թէ հայերէնը և թէ ուուսերէնը հա-
 մեմատաբար, տեղ-տեղ կցելով և մեր դիտողութիւն-
 ները:

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ.

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
 Հողով դեռ արի գլխով արեոր.
 Մեծ ծով էր պատել նորա այնարհը,
 «Ոսկի» ասացին գիտունք այն դարը:
 Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ

Այս կտորը, որ իբրև բալլադի սկիզբ կամ նախա-
 բան իւր «հին ժամանակները» ցոյց տուող խօսքերով
 մեծ և անհրաժեշտ տեղ ունի, նախատիպարի մէջ չկայ:
 Նա սկսուում է այսպէս.

Մինը խիստ տգեղ միւսը գեղեցիկ.
 Մի օր տգեղը ասաց միւսին.
 «Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»:

Одна была красотка какъ бѣльи день
 А большая смуглянка какъ темна ночь.
 Большая меньшую манить потайкомъ,
 „Пойдемъ, сестрица на берегъ морской.“

Հետեւեալ կտորը հայերէնում չկայ: Նա փոխում
 է բալլադի իմաստը, իբրև թէ տգեղը լանկարծակի, սի-
 րունի մի խօսքից դրդուած է ծնեցրել իւր մէջ քրոջը
 խեղտելու հրէշաւոր միտքը. մինչդեռ ըստ Գամառ
 Քաթիպայի տգեղը ռս ունէր սրտում այն բանի համար,
 որ սիրունը փեսայ ունէր, իսկ ինքը ոչ. այդ ձևը աւե-
 լի կատարեալ է թէ տրամաբանական և թէ գեղար-
 ուեստական տեսակէտից: Ահա այն.

Былъ берегъ украшень пеною морской.
 Гляди-ва, сестрица, какъ волнь смуглень,

А я молоденька, каже пѣна бѣла».

Большая наполнилась гнѣвомъ

Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը ետքից ոխ պահած սրտում.
Հաղիւ թէ ծովի ափին էր հասած,
Իւր սիրուն քրոջ գլորեց նա ցած:

Большая меньшую столкнула въ море.

Այնուհետև հայերէնում ծովի ափին կանգնած տրգեղի և ջրերի մէջ թրպրտացող սիրունի միջև սկսուեց է մի գեղեցիկ խօսակցութիւն, (նման մեր ժողովրդական խաղերին), ուր սիրունը խնդրում է քրոջը խնայել իրեն, խոստանալով նրան նախ մանեակը, ապա պսակը և վերջապէս զիջանելով նաև փեսան (համեմատել «գիւմ վզի վաճնոց կիտամ» հալ ժողովրդական երգի հետ): Նախատիպարում — ուսերէնում՝ բալլադին այնքան լարմար այդ խօսակցութիւնը չկայ: Սիրունը իրար ետևից խոստանում է մետաքսեայ դօտին, մանեակը, պսակը և փեսան ու անպատասխան մնալով հրաժեշտ է տալիս քրոջը և ջրերի տակը սուզուում:

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.

«Քոյրիկ, իմ քոյրիկ, փրկէ ինձ մահից...

«Սա ունիմ տանը գեղեցիկ մանեակ,

«Առ՝ էն քեզ լինի պարգևէ ինձ կեպնք»:

— էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,

Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսար:

«Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական:

«Կտամ քեզ սոկի պսակ պատուական»:

— էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,

Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսար:

«Քոյրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունչ,

«Քեզ սիրուն փեսաս կտամ անարտունջ»:

Տգեղի սիրտը դառել էր ժեռ բար,

Գրոջ խնդիրքը թողեց անկատար:

Вѣнь-ка, сестрица, я тебѣ шелковъ поясъ отдамъ.

Вѣнь-ка, сестрица, вѣнецъ отдамъ.

Вѣнь-ка, сестрица, обручальный перстень отдамъ.

Вѣнь-ка, сестрица, и жениха своего отдамъ.

Прощай, прощай, сестрица, прощай мой вѣрный другъ,
Прощай, прощай, сестрица сгубила ты меня.
Куда вѣтеръ подуетъ, туда меня прибить.

Այնուհետև հայերէնը գեղարուեստական կողմից բաւականին՝ բայց տեղին փոփոխութիւն է կրում: Մինչ նախատիպարում ձկնորսներն են աղջկայ մարմինը չորացնում, նրանից տաւիղ շինում և մագերից լարեր հիւսում և այդ երկար ժամանակ դէս ու դէն մտածելուց յետոյ (ДУМАЛИ И ГАДАЛИ) և մտածում արքունիքի մեծ դռան դիմաց դնել ու լարերին խփել, հայերէնում ձկնորսը, օրուալ պարէնը հայթայթելու ելած այդ մարդը՝ իբրև իրական կեանքի և նիւթապաշտութեան օրինակ միմիայն մի թեթև բարիք է կարծում՝ թաղել անթաղ դիակը վրան ծաղիկ ու խոտ ցանելով: Իսկ տաւիղ շինողը, լարեր հիւսողը և նրան արքունիք տանողը ով է լինում—մի աշուղ, գիւղից գիւղ թափառող, դարդ ու ցաւից խօսող և յատկապէս Գամառ-Քաթիպայից սիրուած ու գովաբանուած այդ ժողովրդական երգիչը: Որքան բանաստեղծական է ու պատկերաւոր. նա լաց է լինում, ուսի վրան դնում դիակը՝ այդ անգին գիւտը», տանում տուն, ոսկորներից—մարմնի այդ ուղ ու ծուծից տաւիղ շինում, մագերից լարեր հիւսում և ամեն բան կարգին պատրաստելուց յետոյ համարձակ արքունիք գնում, որպէս պատերազմի ելնող զինուոր. նա ներս է մտնում և սկսում չարութիւնը մերկացնել: Գռան դիմաց դնելով ոչինչ չի լինել, պէտք է ներս մտնել անվախ աներկիւղ, այլապէս չարութիւնը չի պատժուիլ (համեմատել Uhland-ի Sängers Fluch-ի (երգչի անէծքը) հետ): Ձի կարելի չնկատել, թէ այդ մասը որքան չոր ու ցամաք է նախատիպարում, և որ գլխաւորն է անբնական, և թէ ինչպէս հայ բանաստեղծը այդ բիրտ ու անտաշ նիւթից շինել է մի գեղեցիկ, թէև փոքրիկ կերտուածք՝ բնական ու գեղարուեստական:

Շարունակենք համեմատութիւնը:

Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան
Բռնեց մարմինը սիրուն աղջկան:

Ջրեցը հանեց դրեց փի մօտ
 Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:
 Մի աչուղ անցաւ, տեսաւ աղջկան,
 Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան,
 Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
 Չորացրեց նորա մարմնու դիփ հիւթը,
 Գեղեցիկ տաւիղ շինեց սկրեբրեց,
 Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերեց:
 Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
 Գնաց արքունիք տաւիղը ձեռքին:
 Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած
 Տեսաւ տգեղին փեսի մօտ կանգնած:

Подули вѣтры, заныли всѣ лѣса,
 Прибили красотку къ морскому берегу.
 Тянули рыбаки вѣ глухую полночь,
 Поймали рыбаки меньшую царскую дочь,
 И думали гадали что дѣлать изъ нее.
 И сдѣлаемъ мы арфу изъ мелкихъ костей,
 Тонкія струны изъ русыхъ волосъ.
 Поставимъ мы арфу спроть царскихъ воротъ,
 Ударимъ по струнамъ, что арфа говорить.

Այնուհետև գալիս է տաւիղի հնչածը: Այս մասը հայերէնում մի փոքր աւելի երկարացած է: Տաւիղը մի առ մի թւում է, թէ ինչ չարիքներ գործեց տգեղը—պսակը խլեց, փեսան խլեց և իրեն ծովը գլորեց և այդ բոլորը հնչում է համարձակ ծնողների և ժողովրդի առաջ ու դատ պահանջում կարծէք. իսկ նախատիպարում մեղմ է տաւիղի հնչածը. «Прощай, прощай, сестрица, сгубила ты меня». այդպէս էլ վերջանում է:

Բացեց բերանը, լարերին խփեց,
 Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց:
 «Հնչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ,
 «Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.
 «Ըսէ իմ ծնող, լսէ սիրական,
 «Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
 «Ըսէ ժողովուրդ, լսէ անխռով,
 «Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով»:

Прощай, прощай, сестрица, сгубила ты меня.

Послушай, царь съ царицей, что арфа говорит:

Прощай, прощай, сестрица, сгубила ты меня.

Նախատիպարը այդպէս վերջացնում է երգը, իսկ հայ բանաստեղծը դրանով չէ բաւականանում: Հայի թշուառութիւնները երգող, հայի թշնամիներին պարսաւող բանաստեղծի համար այդ քիչ է: Նա ուզում էր որ թրքական գազանութիւնները պատժուեն. նա ուզում է որ չարագործ տգեղն էլ պատժուի: Ընկճուած ազգի՝ առամները կրճտեցնող զաւակի զայրոյթն էր այդ, որ մէկ անգամ էլ բռնկւում էր անիրաւութեան դէմ: Եւ նա աւելացնում է.

Միւս օրը դահիճք խարոյկ վառեցին,

Մահապարտ քրոջ մէջը գլորեցին:

Հուրը պլպլաց, աղջիկը կանչեց.

Էիմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց:

Պարզ է այժմ, որ առանց տաղանդի այդ հուճ նիւթը չէր լղկուել ու չէր գեղեցկանալ այդպէս: Գամառ Քաթիպան անշուշտ նոր շունչ է ներշնչել այդ ժողովրդական անտաշ նիւթին և մեր գրականութեան գեղեցիկ յակինթներէց մէկը դարձրել: Որքան էլ մեծ լինի և ակնյայտնի օտար գրականութեանց թողած ազդեցութիւնը նրա վրայ, բայց այն հանգամանքը, որ նա այդպէս շնորհալի կերպով լղկել թրաշել է մի անտաշ գոհար, աւելի ևս պարզում է մեր առաջ նրա բանաստեղծական մեծութիւնը:

Ա. ԳԵԱՆՋԵՑՅԱՆ